ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«29» ապրիլի 2015 թվական գյուղ Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 9-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻՑ՝ 500 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ, 102 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԵՎ 956.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՅԼ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից՝ 500 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը /հողամասի գտնվելու վայրը՝ Ամասիա համայնք, կադաստրային ծածկագիր՝ 08-010-0028-0005, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրամցման վկայական՝ N 19012015-08-0009/ և 102 քառակուսի մետր մակերեսով այլ հողամասը / հողամասի գտնվելու վայրը՝ Ամասիա համայնք, կադաստրային ծածկագիր՝ 08-010-0049-0052, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրամցման վկայական՝ N 21112014-08-0024/ բնակելի կառուցապատման նպատակով, 956.8 քառակուսի մետր մակերեսով այլ հողամասը /հողամասի գտնվելու վայրը՝ Ամասիա համայնք, կադաստրային ծածկագիր՝ 08-010-0076-0050, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրամցման վկայական՝ N 24122014-08-0025/ հասարակական կառուցապատման նպատակով օտարել աճուրդով: Հողամասերի աճուրդով վաճառքի մեկնարկային գները սահմանել նշված հողամասերի կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով՝ 500 քառակուսի մետր - 72000 /յոթանասուներկու հազար/ դրամ, 102 քառակուսի մետր -14688 /տասնչորս հազար վեց հարյուր ութսունութ հազար/ դրամ և 956.8 քառակուսի մետր - 137779 /հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասունինը հազար/ դրամ:

Ավագանու անդամներ՝

Դավթյան	Արտեմ	կողմ
Հովսեփյան	Հովսեփ	կողմ
Մանուկյան	Արթուր	կողմ
Մկրտումյան	Արթուր	կողմ
Քոչոյան	Ալեքսան	կողմ
Սարգսյան	Ալեքսան	կողմ

Ամասիայի համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

«29» ապրիլի 2015 թվական
գյուղ Ամասիա